

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3/24
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ՆԻՍՏԻ

2020 թվականի հունիսի 10-ին, ժամը 15.00-ին ամփոփվեց «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Հիմնադրամ կամ Համալսարան) հոգաբարձուների խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով) նիստը: Խորհրդի 27 գործող անդամներից քվեարկությանը մասնակցում էին հետևյալ 23-ը.

1. Թոռնիկ Ալիյան – Խորհրդի անդամ,
2. Արմեն Բաբայան – Խորհրդի անդամ,
3. Աշոտ Գիլոյան – Խորհրդի անդամ,
4. Գուրգեն Եղիազարյան – Խորհրդի անդամ,
5. Սերգեյ Երիցյան – Խորհրդի անդամ,
6. Վոլոդյա Էլբակյան – Խորհրդի անդամ,
7. Սարգիս Խանդանյան – Խորհրդի անդամ,
8. Աղավարդ Խաչատրյան – Խորհրդի անդամ,
9. Գոռ Խաչատրյան – Խորհրդի անդամ,
10. Հակոբ Խաչատրյան – Խորհրդի անդամ,
11. Արեգ Խոջոյան – Խորհրդի անդամ,
12. Քրիստինե Խուրշուդյան – Խորհրդի անդամ,
13. Արմեն Հարությունյան – Խորհրդի նախագահ,
14. Արմինե Հովհաննիսյան – Խորհրդի անդամ,
15. Կարեն Ղարախանյան – Խորհրդի քարտուղար,
16. Իրինա Ղափլանյան – Խորհրդի անդամ,
17. Գոհար Մամիկոնյան – Խորհրդի անդամ,
18. Արփինե Մկրտչյան – Խորհրդի անդամ,
19. Գարիկ Սարգսյան – Խորհրդի անդամ,
20. Գագիկ Սարգսյան – Խորհրդի անդամ,
21. Նունե Սարուխանյան – Խորհրդի անդամ,

22. Նունե Մինոնյան – Խորհրդի անդամ,

23. Արտակ Քամայան – Խորհրդի անդամ:

Օրակարգում՝

1. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից կնքվող, 20 միլիոն դրամը գերազանցող գործարքի հաստատման հարցը:
2. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2020 թվականի կառուցվածքում և հաստիքացուցակում փոփոխություններ կատարելու հարցը:

Օրակարգում ընդգրկված բոլոր հարցերի վերաբերյալ նյութերը նախապես տրամադրվել էին Խորհրդի բոլոր անդամներին:

Հարց 1

Խորհրդի անդամներին Խորհրդի քարտուղարի կողմից նախապես տրամադրվել էր հետևյալ տեղեկատվությունը.

- ✓ Հիմնադրամի համալսարանական մասնաշենքերում նախատեսվում են լաբորատորիաների ստեղծման համար անհրաժեշտ շինարարական աշխատանքներ (օրգանական գյուղատնտեսության լաբորատորիա՝ Ավստրիական զարգացման գործակալության ֆինանսավորմամբ, Մննդի անվտանգության լաբորատորիա՝ Եվրոմիության աջակցությամբ /AbioNet ծրագիր/, հարակից լսարանների վերանորոգում)
- ✓ «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն Գնահատող հանձնաժողովի 18.05.2020թ.-ի թիվ 2 արձանագրությամբ, ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքում հաստատվել է հետևյալ մասնակցի թեկնածությունը.
- «Էլիտ Հիլզ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (պետական գրանցման համար՝ 83.110.01548). պայմանագրի գինն է 20.429.000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ գումարը,
- ✓ Հիմնադրամի կանոնադրությամբ (37-րդ կետ, 7) ենթակետ) սահմանված է, որ Հիմնադրամի միանձնյա գործադիր մարմինը՝ ռեկտորը կնքում է պայմանագրեր մինչև 10 միլիոն ՀՀ դրամ կամ դրան համարժեք այլ արտարժույթի չափով: Նշված սահմանաչափը, Հոգաբարձուների խորհրդի որոշմամբ սահմանվել է 20 միլիոն, ըստ այդմ, 20 միլիոն դրամը գերազանցող պայմանագրերը ենթակա են հաստատման Խորհրդի կողմից:

Հարցի վերաբերյալ առաջարկություն կատարեց Խորհրդի նախագահ **Արմեն Հարությունյանը:**

Գնումների իրականացման գործընթացի վերաբերյալ կետ ավելացնել Հոգաբարձուների խորհրդի մյուս նիստին և հրավիրել գնումների համար պատասխանատու մարմնի ղեկավարին պարզաբանումների ներկայացնելու համար:

Քվեարկության արդյունքները՝

Կողմ - 22 ձայն,

Դեմ - 1 ձայն,

Ձեռնպահ - 0 ձայն:

Որոշում 1.

Խորհուրդը որոշեց հաստատել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից կնքվող, 20 միլիոն դրամը գերազանցող գործարքի:

Հարց 2

Խորհրդի անդամներին Խորհրդի քարտուղարի կողմից նախապես տրամադրվել էր հետևյալ տեղեկատվությունը.

Ա) Միջազգային կապերի դեպարտամենտի երկու բաժինների (Միջազգային կապերի համակարգման բաժին՝ 4 հաստիքով, Դրամաշնորհային ծրագրերի համակարգման բաժին՝ 3 հաստիքով) միավորման արդյունքում ստեղծել Միջազգային կապերի և դրամաշնորհային ծրագրերի համակարգման բաժին՝ հետևյալ հաստիքներով.

7. 1 Միջազգային կապերի և դրամաշնորհային ծրագրերի համակարգման բաժին

1	Բաժնի վարիչ, դեպարտամենտի պետի տեղակալ	1	205. 000	205. 000
2	Դրամաշնորհային ծրագրերի համակարգող	1	180. 000	180. 000
3	Առաջատար մասնագետ	2	150. 000	300. 000
4	Մասնագետ	1	100. 000	100. 000
Ընդամենը		5		785. 000

Բ) «Ոսկեհատ» ուսումնափորձնական տնտեսությունում, արտադրության ծավալների մեծացմամբ պայմանավորված, ավելացնել հաշվապահի հաստիք՝ 211.000 ՀՀ դրամ ամսական աշխատավարձով:

Քվեարկության արդյունքները՝

Կողմ - 23 ձայն,

Դեմ - 0 ձայն,

Ձեռնպահ - 0 ձայն:

Որոշում 2.

**Խորհուրդը որոշեց հաստատել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան»
հիմնադրամի 2020 թվականի կառուցվածքում և հաստիքացուցակում
փոփոխություններ կատարելու հարցը:**

Քվեարկության արդյունքների վերաբերյալ լրացված (այդ թվում՝ էլեկտրոնային
եղանակով առաքված) քվեաթերթիկները կցվում են սույն արձանագրությանը եւ
հանդիսանում են արձանագրության ամրաժանելի մասը: